ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 Ա, հեռ. 380250
Էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

№ 10/16.1/9946-15
«14» 08 2015 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր՝ 2015 թվականի օգոստոսի 12-ի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն հասցեագրված թիվ 257-9-ի գրության կապակցությամբ հայտնում եմ, որ ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 32 արձանագրային որոշման հավելվածի 2-րդ բաժնի 7-րդ կետի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Հայտնում եմ, որ Նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է սույն ոլորտում միջազգային փորձը՝ մասնավորապես Ֆրանսիայի, Գերմանիայի, Մոլդովայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և այլ երկրների, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան տեղեկանք:

Գրության մեջ բարձրացված 2-րդ հարցադրման կապակցությամբ հայտնում եմ, որ Նախագիծը մշակվել և դրվել է շրջանառության մեջ սույն թվականի ապրիլ ամսին: Շահագրգիռ պետական մարմինների կողմից Նախագծի վերաբերյալ

ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք ներառվել են ամփոփաթերթում:

Գրության մեջ բարձրացված 3-րդ հարցադրման կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ արդարադատության նախարարությունը կազմակերպել է Նախագծի հանրային քննարկում «Կոնգրես» հյուրանոցի նիստերի դահլիճում՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Հայտնում եմ, որ Նախագծի վերաբերյալ ներկայացվել են առաջարկությունները և դիտողություններ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության, «Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության, «Գիտակցիր իրավունքդ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից, որոնք ներառվել են ամփոփաթերթում:

Գրության մեջ բարձրացված 4-րդ հարցադրման կապակցությամբ հայտնում եմ, որ Նախագիծը հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում (http://www.moj.am/legal/view/article/836):

Գրության մեջ բարձրացված 5-րդ հարցադրման կապակցությամբ հայտնում եմ, որ Նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության 2015 թվականի հուլիսի 8-ի 02/16/8403-15 ելից գրությամբ ուղարկվել է ՀՀ կառավարություն:

Կից ներկայացնում եմ միջազգային փորձի վերաբերյալ կազմված տեղեկանքը և Նախագծի ամփոփաթերթը:

Առդիր՝ 59 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կատարող՝ Շ.Ղուկասյան
ՀՀ ԱՆ կազմակերպական-իրավական վարչություն
հեռ.՝ 31-91-17